



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

No. 293-Ա

14.02.2017թ.

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N
1247-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշման հավելված 3-ի 8-րդ և 14-րդ կետերի, հավելված 4-ի 2-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի «Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին որակավորման առաջին աստիճանի տարակարգ շնորհելու մասին» N 1247-Ա հրամանի հավելվածում՝

1) 20-րդ կետի 4-րդ սյունակի «Հայոց լեզու և գրականություն» բառերը փոխարինել «Դասվար» բառով.

2) լրացնել նոր 32-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «

32. Երևան	Ռ. Միրոյանի անվան թիվ 77 հիմնական դպրոց	Պետրոսյան Սվետլանա Սմբատի	Ռուսաց լեզու և գրականություն
-----------	---	---------------------------	------------------------------

:>>:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ